ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

*<< 20>> << Հունվար >> 2017 թ* N 14
*ք. Եղեգնաձոր*

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԱԼՎԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԵԿ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի և հիմք ընդունելով Ալվարդ Ղազարյանի հետ կնքած 2016 թվականի նոյեմբերի 16-ի N324 ժամկետային աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1.2017 թվականի հունվարի 20-ից Ալվարդ Ղազարյանին ազատել <<ՀՀ Վայոց ձորի մարզի Ազատեկ գյուղի միջնակարգ հանրակրթական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից, լուծելով նրա հետ կնքած 2016 թվականի նոյեմբերի 16-ի N324 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը, կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատանքները:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ